



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԱԽԻՆ

20 ՊԵՏՎՈՐՅԱՆ 1874



ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՅԵԱՆ

1874

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

| ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ | | |
|---------------|-----------|------|
| 1. Թարգևոս | Եպիսկոպոս | Բ. |
| 2. Գրիգոր | « | Բ. |
| 3. Խորեն | « | Բ. 2 |
| 4. Գարեգին | Վարդապետ | Բ. 2 |
| 5. Մատթէոս | « | Բ. 2 |
| 6. Խորեն | « | Բ. 2 |
| 7. Կարապետ | « | Բ. 2 |
| 8. Ներսէս | « | Բ. 2 |
| 9. Ամբրոսիոս | « | Բ. 2 |
| 10. Հմայեակ | « | Բ. 2 |
| 11. Յովհաննէս | « | Բ. 2 |
| 12. Յովհաննէս | « | Բ. 2 |
| 13. Գեորգ | « | Բ. 2 |
| 14. Գրիգոր | « | Բ. 2 |
| 15. Խորեն | « | Բ. 2 |
| 16. Յարութիւն | « | Բ. 2 |
| 17. Սեբաստ | « | Բ. 2 |
| 18. Արիստակէս | « | Բ. 2 |
| 19. | | |
| 20. | | |

ԱՆՍՈՐՆԱԿԱՆՔ

(Ա. Վիճակ)

Գրականութիւն, Կեանքի փառք ևն Գրականութեան փառք

| | | |
|---------------|--------------|------|
| 21. Սենեքերիմ | Մ. Մանուկեան | Բ. |
| 22. Պողոս | Ս. Սարգսեան | Բ. |
| 23. Յակոբ | Յ. Երեմեան | Բ. |
| 24. Բարթոլոմէ | Բ. Բարթոլոմէ | Բ. |
| 25. Գեորգ | Մ. Գեորգեան | Բ. |
| 26. Ն. | Ն. Նուսրեան | Բ. |
| 27. Պողոս | Պ. Պապուսեան | Բ. |
| 28. Եսայի | Ե. Եսայեան | Բ. |
| 29. Մանուկ | Մ. Մանուկեան | Բ. 2 |
| 30. Պողոս | Պ. Պապուսեան | Բ. |
| 31. Բարսեղ | Բ. Բարսեղեան | Բ. 2 |
| 32. Գրիգոր | Գ. Գրիգորեան | Բ. |
| 33. Պետրոս | Պ. Պետրոսեան | Բ. |
| 34. | | |
| 35. | | |
| 36. | | |
| 37. | | |

(Բ. Վիճակ)

Պեղծութիւն

| | | |
|---------------|---------------|----|
| 38. Կարապետ | Ս. Կարապետեան | Բ. |
| 39. Յարութիւն | Յ. Կարապետեան | Բ. |
| 40. | | |

Երկեր

| | | |
|----------------|------------------|----|
| 41. Համբարձում | Բ. Համբարձումեան | Բ. |
| 42. Խաչատուր | Մ. Խաչատուրեան | Բ. |
| 43. Կարապետ | Գ. Կարապետեան | Բ. |
| 44. | | |

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ Մ. ԽՈՒՍՏԱՆ

| | | |
|------------|----------------|----|
| 45. Յովնէփ | Ս. Մարտիրոսեան | Բ. |
| 46. Սեբաստ | Ս. Սեբաստեան | Բ. |
| 47. | | |
| 48. | | |

| | | |
|------|--------------------------------|--|
| Բ. | Բացակայութիւն առաջին | |
| Բ. 2 | Բացակայութիւն երկրորդ | |
| Բ. 3 | Բացակայութիւն րանաւոր պատճառաւ | |
| Հ. 2 | Հրատարակում | |

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ Մ. ԽՈՒՍՏԱՆ

| | | |
|---------------|----------|------|
| 49. Արեւոյան | Սարգսեան | Բ. 9 |
| 50. Միջրան | Պատմաբան | Բ. 2 |
| 51. Յովհաննէս | Ճիւղապետ | Բ. 2 |
| 52. | | |

(Գ. Վիճակ)

Յարգ

| | | |
|--------------|----------------|----|
| 53. Գրիգոր | Ս. Գրիգորեան | Բ. |
| 54. Տէրեմբ | Մ. Տէրեմբեան | Բ. |
| 55. Միջրան | Մ. Միջրանեան | Բ. |
| 56. Արիկ | Ս. Արիկեան | Բ. |
| 57. Ստեփան | Ս. Ստեփանեան | Բ. |
| 58. Նշան | Ս. Նշանեան | Բ. |
| 59. Մարտիրոս | Ս. Մարտիրոսեան | Բ. |
| 60. | | |
| 61. | | |

Գրական փառք

| | | |
|-----|--|--|
| 62. | | |
|-----|--|--|

Միջազգային

| | | |
|-------------|---------------|----|
| 63. Յակոբ | Պ. Յակոբեան | Բ. |
| 64. Յակոբ | Ս. Յակոբեան | Բ. |
| 65. Տէրեմբ | Մ. Տէրեմբեան | Բ. |
| 66. Կարապետ | Ս. Կարապետեան | Բ. |
| 67. | | |

Պեղծութիւն և շարժում

| | | |
|---------------|---------------|------|
| 68. Յարութիւն | Յ. Կարապետեան | Բ. 2 |
|---------------|---------------|------|

(Գ. Վիճակ)

Պատմաբանական և իմաստական

| | | |
|-----|--|--|
| 69. | | |
| 70. | | |

Գրական

| | | |
|-------------|---------------|----|
| 71. Միջրան | Մ. Միջրանեան | Բ. |
| 72. Կարապետ | Ս. Կարապետեան | Բ. |

Պատմաբանական

| | | |
|-----------|-------------|----|
| 73. Յակոբ | Ս. Յակոբեան | Բ. |
|-----------|-------------|----|

Երկեր և շարժում

| | | |
|-----|--|--|
| 74. | | |
|-----|--|--|

Երկեր

| | | |
|-----|--|--|
| 75. | | |
|-----|--|--|

Երկեր և շարժում

| | | |
|-----|--|--|
| 76. | | |
|-----|--|--|

Երկեր

| | | |
|-----|--|--|
| 77. | | |
|-----|--|--|

Երկեր և շարժում

| | | |
|-----|--|--|
| 78. | | |
|-----|--|--|

Երկեր և շարժում

| | | |
|-----------|-------------|------|
| 79. Ղազար | Ս. Ղազարեան | Բ. 2 |
|-----------|-------------|------|

Պատմաբանական

| | | |
|---------------|-----------------|----|
| 80. Միջրան | Մ. Միջրանեան | Բ. |
| 81. Յովհաննէս | Ս. Յովհաննէսեան | Բ. |
| 82. | | |

Երկեր և շարժում

| | | |
|---------------|--------------|------|
| 83. Յարութիւն | Ս. Յարութեան | Բ. |
| 84. Յարութիւն | Ս. Յարութեան | Բ. 9 |

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1874 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԱ.

20 Դեկտեմբեր 1874

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԵՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱՍՏԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՅԷՆՏԻ (Բ. Ատենապետ)

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկագիր կաթողիկոսական կոնդակի խնդրոյն .
2. Փոյթիկի տրամադրութիւնը Մանսանադրութեան .

Ատենանք բացուեցաւ ժամն Յին Դեկտեմբերի 20-ին ի ներկայութեան 44 երեսփոխանաց, որոց վերջին թիւը 43-ի հասաւ :

Ատենապետ Էֆէնտին նախընթաց նիստի ատենադրութեան վրայ ի դիտողութիւն հրատարակեց երեսփոխանները :

Իփէփեան շ. էֆ. — 124 երեսին Ա. սինակին մէջ՝ « պէտք է հասկնամք թէ զեռ խառնաշփոթ վիճակի մէջ է խնդիրը » քսած չ'եմ, այլ քսած եմ. դեռ է հասկնալի թէ ի՞նչ խնդիրը երեսփոխանները :

130 երեսին Բ. սինակին մէջ Ատենապետ Պէյ իւր այս խօսքերը թէ՛ « Ըստ կանոնադրութեան ամեն ատենադրան մի եւ նոյն խնդրոյ վրայ երկու անգամ խօսելու իրաւունք ունի, եւ այս իրաւունքը չեմ ուզեր « ժխտել Իփէփեանին . . . » քսելէն առաջ կանոնադրութեան 32րդ. յօդուածը յիշեցնելով եւ կարծելով որ խօսից կարգն սպա-

ռած է, հարցուց ժողովին՝ միթէ ուրիշ խօսք ուզող չըկայ, եւ եթէ չըկայ՝ Աղթամարայ խնդրոյն տեղեկագիրն ընդունելութեան զննելու ղեկեց. ասկէ ետքն էր որ այն խօսքերն քսաւ, որոնք նոյն տեղն արձանագրուած են :

Ատենապետ վրայ ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով՝ քուէի դրուեցաւ եւ ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ :

Ատենապետ Էֆէնտին ժողովոյն ներկայից նախ՝ երկու բացակայութեան համակներ, Այլատեան Մեսրոպ եւ Արապեան Մանուկ Էֆէնտիններուն կողմէ եկած, որոց առաջինն անձնական տկարութեան եւ երկրորդը՝ ճամբորդութեան պատճառաւ բացակայ զանուելու ստիպուած ըլլալնին կը յայտնէին :

Երկրորդ՝ Օտեան Նշան Էֆէնտին կողմէ անձնական զրաւմանց պատճառաւ եկած հրա-

ժողովրդը ներկայեց, որ կարգացուցաւ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Օտեան նշան է- ֆէնտին անձնական զբաղմունքը պատճառ կը բերէ իւր հրաժարման. բայց մինչեւ ցարդ շատ անդամներ ժողովոյս նիստերուն ներկայ գտնուած է եւ իւր անձնային զբաղմունքը փոխուած չեն. միթէ կարելի չէ առաջարկել իրեն՝ որ ի սէր Ազգին շարունակէ իւր պաշ- տօնը:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Կարծեմ թէ հարկ չկայ դիտողութեան ենթարկել այս հր- րաժարականը՝ քանի որ պատճառաբանեալ չէ. եւ արդէն ժողովն որոշած է ընդունել պարզ հրաժարականներն. ուստի կ'առաջարկեմ քը- ւէի դնել առանց դիտողութեան:

Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ այս հրաժարականը, եւ մեծամասնութեան ձեռն- պահութեանը դէմ 6 ձայնով 2ԸՆԴՈՒՆՈՒՆՅԱԼ:

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Արապեան էֆ. ի բացակայութեան պատճառին վրայ խօսք ու- նիմ. — Կրնայ պատահիլ որ երեսօխանը ու մանք ճամբորդութեան պատճառաւ բացակայ գտնուելու ստիպուին, եւ այս բացակայու- թիւնները կրնան տասը քսան օրուան համար ալ մէկ երկու տարւոյ համար ալ ըլլալ: Նը- կատողութեան արժանի է այս կէտը. ըստ ու- բում բացորոշ սահման մը ցոյց տրուած չէ թէ մըքան ժամանակի համար բացակայից նե- րողամիտ ըլլալ պէտք է. ասիէ կրնայ հետեւ- լիլ որ ժողովն օրինաւոր նիստեր ունենալուն արդելք մը պատահի: Այսպէս կրնայ երեսօխ- ան մը երկար ժամանակ բացակայ գտնուիլ եւ ինքզինքն արդարացնել. քանի որ սահման մը դրուած չէ եւ ժողովն Կանոնադրութեան մէջ ալ տրամադրութիւն մը չկայ այս մասին: Ուստի անհրաժեշտ է սահման մը դնել եւ պայմանաժամ մը որոշել օրինակի համար 5 շաբաթ կամ 5 ամիս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ առաջարկութիւ- նը դրաւ որ եւ պատճառաբանեալ պէտք է մա- սուցվի:

Երրորդ՝ Ատենապետ էֆէնտին ժողովին ներկայեց Զեռնասութեան դիւանի անդամ Ալթունեան Առաքել էֆէնտին իր անբաւա-

կանութեանը եւ անձնական զբաղմունքը պատ- ճառաւ հրաժարողին, որ կարգացուցաւ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Ալթուն Առաքել էֆէնտին՝ որոյ անդամակցելու պատիւն ունիմ, եւ որ ատենադպիրն է մեր դիւանին, հակա- րակ իւր հրաժարագրով յառաջ բերած այն յայտարարութեան թէ անձեռնառ է եւ նոյն դիւանին պաշտօնը վարելու հանգամանքները չունի, կը վկայեմ ի փորձոյ թէ շատ ձեռն- ձաս եւ կարող է նոյն պաշտօնին. ուստի եւ իւր հրաժարականը մեծ ցաւ կը պատճառէ ինձ, Զեռնապէս ոչ միայն իբր երեսօխան, այլ եւ իբր Ատենապետ նոյն Դիւանին՝ յորմէ կը հրաժարի, կ'առաջարկեմ որ իւր հրաժարակա- նը չընդունուի եւ հրաւիրուի իւր ունեցած կարողութիւնները յօգուտ Ազգին դորձածելու:

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Ք. ՄԿՐԵԱՆ. — Կը կըրկ- նեմ Խորէն Սրբազանին առաջարկութիւնն իբր անդամ նոյն դիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ալթուն Առաքել էֆէն- տին մասնաւորապէս ինձի ըսած է թէ ուրիշ դիւաններու մէջ կարող, իսկ այս դիւանին մէջ անկարող է պաշտօն վարելու: Ուստի իւր հրաժարականը քուէի կը դնեմ:

Չայս ըսելով Ատենապետ էֆէնտին քուէի դրաւ Ալթուն Առաքել էֆէնտին հրաժարակա- նը, եւ մեծամասնութեան ձեռնպահութեանը դէմ 8 ձայնով 2ԸՆԴՈՒՆՈՒՆՅԱԼ:

Չորրորդ՝ Ատենապետ էֆէնտին ժողովին ներկայեց Իրաւասութեան դիւանին կողմէ ի պատասխան Իիէքճեան էֆ. ի 10 առաջարկու- թեանց եկած տեղեկագիրը, որ կարդացուե- ցաւ նոյն դիւանի տեղեկարեր Տ. Մատթէոս վարդապետին միջոցաւ, եւ որոյ պատճէնն ա- հաւասիկ:

Ազգային ժողովից Իրաւասութեան դի- ւանիս յղուած Իիէքճեան էֆէնտին 10ն առա- ջարկութիւնները քննելով Ձեր Իրաւասութեան դիւանը կը փութայ իր քննութեանց արդիւնքը ներկայել Ազգային ժողովից:

Քիէկճեան էֆէնտին առաջին առաջար- կութիւնը, որ է հրաժարեալ Քաղաքական ժո- ղովոց համարատուութիւնքը քննել, արդէն

ժողովը ընդունած եւ յղած է զանոնք Նախա- քննիչ դիւանաց ի քննութիւն:

ՔԲ. Առաջարկութիւնը, որ է Պոյաճեան, Հովուեան եւ Կրճիկեան էֆէնտիններու հրա- ժարականներուն պատճառները քննել. ժողովը յիշեալ էֆէնտիններուն հրաժարականաց պատ- ճառները նկատողութեան չառնելով արդէն ըն- դունած է զանոնք եւ վերջացուցած. ուստի եւ Ձեր Դիւանը այս մասին քննութեան հարկ չը տեսներ:

ՔԳ. Առաջարկութիւնը, որ ժողովողային հանրագրութեանց կը վերաբերի, եւ ժ. առա- ջարկութիւնը, որ է ընտրողաց մեծ մասին ընտրութեան չմասնակցելուն պատճառները քննել. այս երկու առաջարկութիւնները Իրա- ւասութեան դիւանիս չը վերաբերելուն, Մայր դիւանին դարձուցաւ իրենց պատշաճ Դիւա- նին յղուելու համար:

ՔԴ. Ք. Բ. Է. Բ. եւ Ք. առաջարկու- թիւնները քննելու ալ իրարու կապակցեալ՝ ան- ցեալ վարչական տաղնապին կը վերաբերին եւ անոր հետեւանքներն են, որք երկու կերպով արդէն ներկայացած են Ազգային ժողովից. նախ հրաժարականաց քննիչ յանձնաժողովոյ տեղեկագրովը եւ երկրորդ նախորդ Քաղաքա- կան ժողովոյ հրատարակած Բացատրութեան տեսքովը, որք եւ ունին իրենց կարեւորու- թիւնը, ինչպէս եւ նոյն իսկ նախորդ Քաղաքա- կան ժողովոյ Համարատուութեան Վերջաբանը այդ իրողութեանց քննութիւնը կը պահանջէ. հետեւապէս եւ Ձեր Իրաւասութեան դիւանը կ'առաջարկէ որ այս վեց կէտերը յատուկ մաս- նաժողովոյ մը քննութեան ենթարկէ Ազգային ժողովը:

15 Գեղեցիկներ 1874

Արեւ-դէր Արեւ-պետ Տէր-էր-էր
ԱՐԻՍԱԳԵՍ Ք. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ
ՄԱՄԻՐԷԱՆ
Ար-
Ս. ՄԱԶԼԸՄԵԱՆ

Ընթերցման միջոցին Ատենապետ էֆէն- տին ծանոյց ժողովին թէ Մայր դիւանին կող- մէն արդէն յղուած են Գ. առաջարկութիւն ԅարաբերութեանց դիւանին եւ ժ. ը Նախաձեռ- նութեան դիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ դիտողութիւն ը-

նող չըկայ, տեղեկագրին եզրակայութիւնը քուէի պիտի դնեմ:

ՅՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Խօսքս կանոնա- կան կէտի մը վրայ է. իսկ բուն խնդրոյն վրայ խօսք չունիմ: Բացատրութիւն մը պիտի խընդ- րեմ Դիւանէն. թէ եւ Կանոնադրութեան մէջ նայեցայ, բայց չը գտայ. արդեօք Նախաքնն- իչ զանազան դիւանաց կողմէ երբ իրենց յղուած առաջարկութեանց պատասխանները գան՝ օրակարգը պիտի անցնին թէ ոչ նոյն հետախ քուէի պիտի դրուին: Հարցումս պարզ է, որուն պէտքն զգացի ապագային մէջ թնչ- պէս վարուելիքնիս գիտնալու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ ժողովը ընդու- նի տեղեկագրին եզրակայութիւնը, նկատողու- թեան առած կ'ըլլայ եւ այն ատեն խնդրոց կարգը կ'անցնի, եւ օրակարգը կ'որոշվի. իսկ եթէ մերժէ, խօսք չը մնար անոր վրայ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Երկու երեսօխ- նաց անուններ յիշուած են տեղեկագրին մէջ, պատճառաբանութեամբ հրաժարուած. միթէ այդ պատճառաբանութիւնները կապակցու- թիւն չունին միւս դէպքերուն հետ. ասի բա- ցատրութեան կարօտ կէտ մըն է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկարեր Հայր սուր- բին կու տամ խօսքը, որում անկ է պատաս- խանել այդ հարցման:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Երբ ժո- ղովը ժամանակին նոյն հրաժարելոց պատճառ- ներն ուղեց իմանալ եւ քննել, նոքա չը յայտ- նեցին, հետեւապէս եւ ընդունուեցաւ անոնց հրաժարականը. ուստի ձեր Իրաւասութեան դիւանն ալ ըմբռնած խնդիր մը նկատելով զանց ըրաւ զայն:

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Տ. Մատթէոս վարդապետին:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Քանի որ այդ եր- կու հրաժարականները կապակցութիւն ունին անցեալ դիպաց հետ, եւ կ'առաջարկեմ որ անոնք չընդունուին մինչեւ անցեալ դիպաց քննութիւնն աւարտի. քանզի կարելի է թէ յանձն առնուն ետքէն իրենց երեսօխանու- թեան պաշտօնը եւ հրաժարականներն յետս կո- չեն:

ՉԱՅԵՆՐ. — Անոնք չէ թէ երեսօխանու- թեանէն, այլ նախորդ Քաղ. ժողովին հրաժա- րած էին:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Ուրեմն ես սխալ

հասկըցեր եմ, հետեւապէս առաջարկութիւնս ետ կ'առնում:

Ուրիշ դիտողութիւն ընող չըլլալով Ատենապետ էֆէնտին տեղեկագիրը քուէի գրաւ, եւ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսել է թէ ժողովն ընդունեց մասնաժողովի մը ընտրութեան առաջարկութիւնը յիշեալ 6 կէտերուն քննութեանը համար. ուստի այդ ընտրութիւնը կը մնայ յաջորդ նստին, եւ երբ մասնաժողովն իւր տեղեկագիրը բերէ՝ այն ատեն խնդրոց կարգը կ'անցնի եւ օրակարգը կ'որոշուի:

Հինգերորդ՝ Ատենապետ էֆէնտին ժողովոյն ներկայեց Քրիստոստուր էֆէնտին կողմէ մատուցուած երկու գրաւոր առաջարկութիւններն, որ կարդացուեցան յետագայ կարգաւ:

x.

Վսեմափայլ Ատենապետ Աղգային ժողովոյ Լսեցինք որ Սրբազան Պատրիարք Հօր Պատրիարքութեանը վերաբերեալ կայսերական Հրովարտակը եկած է. կ'առաջարկեմ նոյն հրովարտակը եթէ պատրաստ է՝ կարդալ յատենի ժողովոյս, եւ նոյնին թարգմանութեամբը ժողովոյս ատենագրութեան մէջ արձանագրել. որպէս զի մէն մի երեսփոխան նորա պարունակութեանը գիտակցութիւն ունենայ եւ իմանայ պատրիարքական հրովարտակի սահմանը եւ ըստ այնմ տարածէ իւր խորհրդածութեան սահմանը: Թէեւ ասկից յառաջ բարեյիշատակ Պէրպէրեան Աւետիս պատուելի պատմութեան միջոցաւ քանի ինչ պատրիարքաց հրովարտակներ հրատարակեալ են, բայց նոյն ժամանակէն հետէ իմաստից եւ բառից փոփոխութիւնք եղած ըլլալով, պէտք կը տեսնեմ նոր խմբագրութեանն ալ վերահասու ըլլալ. մանաւանդ թէ ժողովոյս կողմէն ընտրեալ Պատրիարքին հաստատութեանը եւ պաշտօնին վերաբերեալ արքունի Հրովարտակին ընթերցումը յատենի ժողովոյս հարկ համարելով, այս առաջարկութիւնը կը ներկայացնեմ:

20 դեկտ. 1874 ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

Ատենապետ էֆէնտին հրաւիրեց երեսփոխաններն այս առաջարկութեան վրայ գիտազուգութիւն եթէ ունին ընել:

Դիտողութիւն ընող չըլլալով եւ քանի մը երեսփոխանք նոյն առաջարկութեան ձայնակից ըլլալին յայտնելով, Ատենապետ էֆէնտին քուէի գրաւ, եւ ժողովն միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ:

Ատենապետ էֆէնտին յայտնեց թէ Պատրիարքի հաստատութեան կայսերական Հրովարտակը պատրաստ չըլլալուն համար, յաջորդ նստին կը մնայ ընթերցումը:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Որովհետեւ ծանրակշիռ է այն Հրովարտակն՝ որ պիտի կարդացուի, եւ որուն իմաստին վրայ կրնանք շատ խորհրդածութիւններ ընել եւ բազում նիւթ քաղել մեր Ազգին Պատրիարքութեանը յատկացեալ արտօնութեանց վրայ, կ'առաջարկեմ որ օրակարգն անցնի եւ ամեն երեսփոխան իմանալով զայն՝ բարեհաճին ընթերցմանը ներկայ գտնուիլ, որպէս զի թէ՛ մեր Վեհափառ կայսեր եւ թէ՛ Ազգին Դիւանին Ամեն Սրբազան Պատրիարք Հօր օրինաւոր յարգանք մ'ըրած ըլլանք:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Արդէն ինչպէս Ատենապետ էֆէնտին ըսաւ, Հրովարտակը պատրաստ չէ եւ ընթերցումը գալ նըստին պիտի մնայ: Իսկ Խորէն Սրբազան կ'ըսէ թէ երեսփոխանաց ամենուն ներկայութեան կարդացուի Հրովարտակը, հարիւրի մօտ ընտրեալ երեսփոխան ունինք, կարելի է թէ ամենն ալ միանգամայն չը կրնան ներկայ գրանուիլ յաջորդ նիստին. անոնց ամենուն ներկայութեան սպասել շատ երկար կ'ըլլայ, եւ ինչ հարկ կայ սպասել, քանի որ Հրովարտակը պիտի անցնի ժողովոյս արձանագրութեան մէջ, եւ անոր ընթերցման ատեն ներկայ չը գտնուողն ալ կրնայ ատենագրութեան մէջ հրատարակուած օրինակը կարդալ եւ հասկընալ:

ԵՆԻՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ինչ առաջ խօսող Արժ. Հայրն ըսաւ Խորէն Սրբազանի առաջարկութեան նկատմամբ թէ Հրովարտակը կարդացուելէն ետեւ ատենագրութեան մէջ անցնելով պիտի տեղեկանայ ամեն ոք անոր իմաստը:

տիցը, հետեւապէս անոր ընթերցմանը համար երեսփոխանաց ամենուն ներկայանալուն սպասելու հարկ չըկայ: Ասոր տարակոյս չըկայ. բայց կարծեմ թէ Արժ. Վարդապետը սխալ ըմբռնեց եղած առաջարկութիւնը. Խորէն Սրբազան չըսաւ թէ սպասենք՝ մինչեւ երեսփոխանաց ամենը ներկայ գտնուին. այլ պարզապէս ըսել ուզեց թէ որովհետեւ շատերը ներկայ չեն այսօր, եթէ օրակարգն անցնի, ամենն ալ կ'իմանան եւ թերեւս այսօրուէ աւելի բազմաթիւ կ'ըլլան յաջորդ նիստին եկող երեսփոխանները: Այս մասին ես ալ համակարծիք եմ. ուստի Խորէն Սրբազանին առաջարկութիւնը կրկնելով կը խնդրեմ որ օրակարգն անցնի յաջորդ նստին համար:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Խօսք ուղեցի Մատթէոս վարդապետին պատասխանելու համար. սակայն հարկ չմնաց, ըստ որում ինչ որ պիտի ըսէի՝ Եսուսեֆեան էֆէնտին խիստ լաւ կերպով բացատրեց:

2.

Վսեմափայլ Ատենապետ Աղգ. ժողովոյ Տնտեսական խորհրդոյ 1870-72 տարիներու համարատուութիւնքը ժողովոյս ներկայացուած եւ վերջընթեր նիստին Նախաքննութեան գիւտնեցուցն յղուած են. կ'առաջարկեմ որ 1872-74 տարիներու Տնտեսական խորհրդոց գործառնութեանց համարատուութիւնները խնդրուին Վարչութեանէն, որպէս զի Դիւանները իրենց քննութիւններն եւ տեղեկագիրները ճիշդ եւ կատարեալ ընելու գէթ կարողանան:

20 դեկտ. 1874 ՔՐԻՍՏՈՍՏՈՒՐ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս առաջարկութեան վրայ Դիւանը հարկ կը համարի խնդրել Սրբազան Պատրիարքէն, որ բարեհաճի նախորդ Վարչութեան ճիւղերուն համարատուութիւններէն պակաս մնացածները փութացնել տալ, որպէս զի Նախաքննիչ գիւտնեցուցող կարենան ամբողջապէս քննել զանոնք:

Վեցերորդ՝ Ատենապետ էֆէնտին ժողովոյն ծանուց թէ նախորդ կրօն. ժողովին եւ նախորդ Վանօրէից խորհրդին Համարատուութիւնները հրատարակուած եւ եկած են Աղգ.

ժողովին, որոնք պէտք է յղել Նախաքննութեան գիւտնեցուցն որուն որ կը պատշաճին. եւ յաւելցնելով թէ Վանօրէից խորհրդոյն համարատուութիւնը կալուածոց գիւտնին կը վերաբերի, պատրաստուեցաւ քուէի գնել անոր յղումը:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Վանօրէից խորհուրդն Աղգ. ժողովին թէ Վարչութեան Խորն ժողովին ուղղեալ պէտք է տայ իւր համարատուութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախորդ վարչութեան Քաղ. ժողովոյ Համարատուութեան տեղեկագրին մէջ կը տեսնենք որ Քաղ. ժողովն իւրաքանչիւր Խորհրդոյ հետ ունեցած յարաբերութեանց կարեւոր մասերը տեղեկագրելէ ետեւ, հրաւիրեց է իրեն համարատու եղող նոյն Խորհուրդները, որ ըստ սովորութեան իրենց Համարատուութեան տեղեկագրերը յանուն Քաղ. ժողովոյ մատուցանեն առ Աղգային ժողովն. Վանօրէից խորհուրդն ալ ըստ այնմ վարուեր է:


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վանօրէից խորհուրդը Վարչութեան մէկ մասն է, որ Քաղ. ժողովին տուած եւ անոր հետ բանակցած է իւր համարատուութեան վրայ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Կ'առաջարկեմ գործադիր իշխանութեան յանձնել, որ անոյ կողմէն գայ Աղգային ժողովին:

ՁԱՅՆԵՐ. — Այնպէս եղած է արդէն:

Ատենապետ էֆէնտին յիշեալ երկու Համարատուութեանց յղումները զատ զատ քուէի գրաւ, եւ ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ նոյն յղումները, կրօնական ժողովինը՝ Ձեռնհասութեան գիւտնին, եւ Վանօրէիցը՝ կալուածոց գիւտնին:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Քանի մը նիստ առաջ մատուցած գրաւոր առաջարկութեանցս մէջ հարցում մ'ալ կար կախուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութեանց Յանձնաժողովի մասին. այդ հարցման վրայ ոչ կարծիք յայտնուեցաւ. եւ ոչ պատասխան տրուեցաւ. Դիւանը շփոթեց եւ անպատասխանի մնաց:



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՈՆԴԱԿԻ ԽՆԴՐՈՑԵՆ
Ձեռնհասութեան եւ Իրաւասութեան մրացեալ գիւտնաց կողմէն եկած տեղեկագիրը

կարգացուեցաւ իրենց տեղեկաբեր Տ. Խորէն Եպիսկոպոսին միջոցաւ, որոյ պատճէնն անաւատակ :

«1872 ապրիլ 20 թուով ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին կողմանէ առ Ազգային Երեսփոխանութիւնն ուղղեալ Կոնդակին առթիւ՝ Ազգային ժողովէն յատկապէս կարգուած Յանձնաժողովոյ 1874 յունիս 15 թուականաւ տեղեկագիրը՝ պատկառելի ժողովոյդ յանձնարարութեան համեմատ այսօր Ձեռնհասութեան եւ Իրաւասութեան միացեալ դիւանացս աւանդուելով, անմիջապէս նկատողութեան առնուեցաւ եւ եղած քննութեանց արդիւնքը հետեւեալ կերպիւ պատկառելի ժողովոյդ կը ներկայացուի :

«Միացեալ Գիւանքս ի պատասխանի վերոյիշեալ Հայրապետական Կոնդակին տրուելիք բացատրութեանց մասին, Յանձնաժողովոյ Տեղեկագրին մէջ նշանակուած եղբակացութեանց կը ձայնակցին, այսինքն թէ՛ «Ընդհանուր ժողովը կատարուած ընտրութիւնը (Սոյ կաթողիկոսութեան) վաւերացնելով՝ ազգային հաւանդ սովորութեանց եւ ամենայն Հայոց Հայրապետութեան Իրաւասութեանը դէմ գործելու բնաւ միտում ունեցած չէ» : միայն թէ՛

«Նկատելով որոնց Կոնդակին ընդունելութեան թուականէն ի վեր անցած երկար ժամանակի միջոց մը եւ զանազան պարագաներ՝ Վեհափառ Հայրապետին խնդրած երկու պատգամաւորաց ստիպողական կարեւորութիւնը թերեւս նուազեցուցած են, կ'առաջարկեն որ սոյն կէտը Նորին Վեհափառութեան գրուելիք պատասխանագրին մէջ յայտնուելով այս մասին պէտք եղածը անօրինելու համար Նորին Ս. Օծութեան կողմանէ գալիք վերջնական գրութեան մը սպասուի :

Ուստի կ'եզրակացնենք միացեալ Գիւանքս թէ, ժամ յառաջ վերոյգրեալ իմաստով պաշտօնական գիր մ' ուղղուի առ Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց յանուն Ազգային ժողովոյ, խորհրդակցութեամբ միացեալ Գիւանքս :

15 Նոյեմբեր 1874
Արք. Զեւեհան-Քեան Արք. Գեորգի Զեւեհան-Քեան
Գեորգի Գեորգի Գեորգի
ՅՈՂՈՎԱՆՆԵՐ Ք. ՄԱՐԿԵՍ ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊՍ. ՆԱՐԳԵՍ
Արքեպիսկոպոս Իրաւասութեան Արքեպիսկոպոս Իրաւասութեան
Թեմ Գիւանքս Թեմ Գիւանքս
ԱՐՄՈՍԱԳԵՍ Ք. ՄԱՐԿԵՍԵԱՆ Մ. Վ. ՌԶՄԻՈՒԵԱՆՅ
Արք. Իրաւասութեան Գիւանքս
Յ. Ս. ՄԱՐԿԵՍԵԱՆ

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Կ'առաջարկեմ որ այս տեղեկագիրն անմիջապէս քուէի դրուի եւ ընդունուի. վասն զի ասկէ աւելի կտրուի եւ գործնական միջոց մը չէր կրնար ձեռք բերել ժողովը :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Նախաքննիչ դիւանաց բերած երկու առաջարկութեանց մին շատ ընդունելի է, այսինքն այն՝ յորում կ'ըսէ թէ Ազգային ժողովը Սոյ խնդրոյն մէջ էջմիածնի իրաւունքներն ունակոյ ընելու կամ անոնց վրաս հասցնելու նպատակ չէ ունեցած : Իսկ միւս մասը՝ որ պատգամաւոր դրկելու կամ չը դրկելու խնդրոյն կը վերաբերի, առաւել զըրկելու իմաստն ունի քան թէ չը դրկելու. թէ եւ կ'ըսեն թէ ժամանակի անցմամբ եւ այլ եւ այլ պարագայից պատճառաւ պատգամաւորութեան խնդիրն իւր կարեւորութիւնը կորուսած է. բայց թէ՛ պատգամաւոր դրկել պէտք է կամ ոչ, այս մասին որոշ կարծիք կամ իմաստ մը չեն բերեր, այլ միայն Վեհափառին կամացը դիմել եւ հարցնել կ'առաջարկեն. այնպէս որ զայդ ընդունելով՝ ընդունած պիտի ըլլանք նաեւ եթէ որ մը Վեհափառն երնէ պատգամաւոր ուզէ, անմիջապէս դրկել : Սակայն խնդրոյն կարեւոր կէտը աս է թէ, արդեօք պատգամաւոր դրկելն քաղաքագիտութեան գործ մ' է, կամ, թէ օգտակար թէ ոչ վրասակար է. այս կէտը բնաւ ուշադրութեան առած չեն նախաքննիչ դիւանները :

Երբ առաջին անգամ այս Կոնդակի խնդիրն ժողովին առեանն ելաւ եւ վիճարանութիւններն սկսան, փոխանակ յաւարտ համեմուր դադրեցան եւ խնդիրը մասնաժողովի մը յանձնուեցաւ. այն ատեն մեծ կարեւորութիւն առած էի եւ ուշի ուշով քննած այս Կոնդակի խնդիրն՝ որչափ իմ կարողութիւնս կրնարէր. բայց որովհետեւ ան ատեն այդ խնդիրը մասնաժողովի մը յղուեցաւ, ես ալ ուրիշ կերպիւ հրատարակեցի իմ տեսութիւններս այս խնդրոյն վրայ. եւ այսօր շատ պատշաճ էր զանո՞ք կարգալ հոս. սակայն ըստ որում նախաքննիչ դիւանները կ'ըսեն թէ ժողովն երբէք էջմիածնի կաթողիկոսութեան իրաւունքները ժխտելու միտում ունեցած չէ, ուստի այժմ աւելորդ կը համարիմ խօսիլ : Իսկ պատգամաւոր դրկելու առաջարկութեան մասին կարեւոր խօսելիքներ ունիմ :

Պէտք է գիտնալ թէ Վեհափառին կողմէ

յանուն Ազգային ժողովոյս եկած Կոնդակը պարզ առաջարկութիւն մը չէր պարունակեր. անոր մէջ ուշադրութեան արժանի հինգ վեց կէտեր կային, որոնց առաջինն էր Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը չճանչնալ եւ քուրովին մերժել :

Բ. Ազգային ժողովոյ դէմ ամբաստանութիւն, իբր թէ անձեռնհաս է այսպիսի խնդրոյ մը միջամտել :

Գ. Օտար ազդեցութեանց գործիք ըլլալն այս խնդրոյն մէջ, որ քիչ ծանր յանդիմանութիւն չէ :

Դ. Վեհ. Կաթողիկոսի այն սպառնալիքը թէ՛ եթէ իւր ուղածը չկատարուի, Եկեղեցական Ընդհանուր ժողով գումարելով պիտի դատապարտել տայ զմեզ. կը գուշակէր թէ իւր նախադաճութեան տակ գումարելի ընդհանուր ժողովն անպատճառ պիտի դատապարտէ զմեզ :

Ե. Այն քանի մ'անգամ կրկնած եւ յեղյեղած խօսքը՝ թէ չարք է Եւ զոտարարուի՝ չէր բացատրած. եթէ իրօք այդպիսի վրտանդ մը կար, ամենէն առաջ ինք պէտք էր հասկցնել եւ զգացնել մեզ. մինչդեռ օտար ազդեցութեանց վրայ շատ կը խօսի իւր Կոնդակին մէջ, վտանգին վրայ շատ շխօսիր . . .

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԱՊՍ. — (Ընդհանուր) Խորհրդէն դուրս խօսքեր են ատենք. վասն զի այսօրուան խնդիրը պարզապէս նախաքննիչ դիւանաց առաջարկութեան վրայ է :

Ուրիշներ ալ կը ձայնակցին Տ. Խորէն Աբրազանին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'ազգայեմ, թողէք որ շարունակէ առեմարիմ էջմիածին :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — (Ընդհանուր) Վերջապէս Ձ. կէտն է պատգամաւոր դրկելու առաջարկութիւնը, Վեհափառ Տէրը մենէ պատգամաւոր կ'ուզէ, որպէս զի բերան առ բերան խօսի : Եթէ իւր Կոնդակին պարունակութիւնը մոռցած չէք, կը յիշէք անուշտ թէ Վեհ. Կաթողիկոսն ոչ միայն այս ժողովն անձեռնհաս դատած է, ոչ միայն ըսած է թէ Եկեղեցական Ընդհանուր ժողովով ալ մի եւ նոյն դատաւիճիւրը պիտի արձակեմ, այլ նաեւ ըսած է թէ՛ եթէ ինքզինքնիդ արդարայնելու ալ ելլաք, ըսելով որ էջմիածնի աթոռին իրաւանց

վրաս հասցնելու միտում չենք ունեցած, չը պիտի հաւատամ : Այս կէտին լաւ ուշադրութիւն ըրէք :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԱՊՍ. — (Գործիք) Ընդհանուր Խորհուրդ Եկեղեցական չեմ կրնար համբերել որ Վեհ. Կաթողիկոսի Կոնդակին իմաստն այս աստիճան խեղաթիւրի երեսփոխանի մը կողմէ, եւ Գիւանն անտարբեր կենայ այս մասին :

Տ. Խորէն Աբրազան խորհրդարանէն մեկնելու ուղեց, որում հետեւեցան Եկեղեցական Երեսփոխան Հայրերէն ոմանք :

Ուրիշ երեսփոխանք ալ Տ. Խորէն Աբրազանին ձայնակցելով բողոքեցին Իփէկճեան էջմի. խօսքերուն դէմ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. Է. — Եւ Եկեղեցիան չարք է, Զենք մեկնիր, բայց մենք ալ պիտի պատասխանենք Իփէկճեան էջմիածին :

(Այս էջմիածին գործիքն էր ժողովի մէջ)

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Խօսքս շարունակելէ առաջ պարտ կը համարիմ ըսել թէ հակառակ կարծիք ունեցող երեսփոխանք իրաւունք չունին այս կերպով հերքել իմ խօսքերս :

ԵՆԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Ես ալ արդէն խօսք ուղած եմ եւ Իփէկճեան էջմիածին դէմ խօսելիք ունիմ. բայց պիտի սպասեմ մինչեւ կարգս գայ խօսելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Արքեպիսկոպոսի Գեորգի) — Փոխանակ ձգել երթալու կրնաք բողոքել, եւ բողոքնիդ կ'արձանագրուի :

Այս միջոցին Տ. Խորէն Աբրազան եւ ընկերակիցներն նորէն եկան իրենց տեղը բազմեցան :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ձեմ կրնար ընդունիլ որ ժողովոյս արձանագրութեան մէջ անցնին այնպիսի անարգական խօսքեր՝ որոնք մեր Վեհ. Կաթողիկոսին դէմ զրպարտութիւն կը համարուին : Կը բողոքեմ, եւ այս բողոքս պէտք է արձանագրուի :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Իմ խօսքերուս մէջ եւ ոչ իսկ բառ մը կար՝ որ անարգական ըլլայ Վեհ. Կաթողիկոսին դէմ. ուստի անիրաւ կը համարիմ այն բողոքներն՝ որ ուղղուեցան

զրկելով բողոք ընելէ ետքը պատգամաւոր ուղած է դարձան տանելու մտօք : Այժմ ձեր Նախաքննիչ զիւանաց քննութիւնն եզրակացութեան մը յանգած է , որ ըստ իս շատ իրաւացի է . թերեւս Վեհ . Հայրապետն արդի Սրբազան Պատրիարքին նախադատութեանը ներքեւ գործող ժողովոց վրայ աւելի վստահութիւն ունենայ , իրեն տրուած բացատրութեանց անկեղծութեանը վրայ տարակոյտը փարատելով գոհ ըլլայ , եւ բոլորովին համոզուի թէ ազգային երեսփոխանաց մէջ միտում չըկայ եղբր էջմիածնի իրաւանցը մեղսելու : Շատ հաւանական է կ'ըսեմ որ Վեհափառին բոլոր տարակոյտն ու տժգոհութիւնը ջնջուելով՝ ալ այնուհետեւ սոյն խնդրոյն վրայ որեւէ գանգատ կամ խօսք մը մնացած չըլլալը յայտնէ :

Գալով Վեհ . Հայրապետին մենէ պատգամաւոր ուղելու խնդրոյն . ո՞վ ըսաւ արդեօք թէ պատգամաւոր ուղելը միայն Սոյ խնդրոյն համար է , եւ ոչ թէ Եկեղեցւոյ բարեւաւութեանը համար ուրիշ կարեւոր խնդիրներ չունենայ առաջարկել Ազգին : Այո՛ , զիւրին է մակարեւել թէ Նորին Վեհափառութիւնը թերեւս ունենայ այնպիսի առաջարկութիւններ՝ որոց համար պատշաճ գատած ըլլայ այս առթիւ խորհրդակցիլ նախ պատգամաւորոց հետ , Ազգին եկեղեցական եւ աշխարհական դասուն գաղափարներն իմանալ եւ ըստ այնմ իւր առաջարկութիւններն ընել , որոց ինչ ըլլան ապահով եղիք թէ չեմ գիտեր : Նոյն իսկ մենք էինք որ Վեհափառին բողոքին դէմ պատասխանելու համար զրկած տեղեկագրերնուս մէջ խոնարհաբար առաջարկած էինք մէկ քանի խնդիրներ , որ ինք Պօլիս եղած ատեն քննութեան յանձնած էր , եւ դայս յիշեցուցինք իրեն . ո՞վ գիտէ , թերեւս այնպիսի գաղափար մ'ունեցած ըլլայ . . .

ԻՓԵԿՃԵԱՆ Հ. ԷՅԹ . — (Ըրդճճճ) Մեր ժեր է ատոնք այս անգամ իւր կոնդակին մէջ . ԵՆՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՅԹ . — (Շարճճճ) Իփեկեան էֆէնտի բարեկամս այնպէս կը կարծէ , ես ալ հակառակը կը մեկնեմ . որովհետեւ աշխարհիս մէջ ամեն տեսակ մեկնութիւն կըրնայ ըլլալ , կարելի է ոչ այն եւ . ոչ այս ճըշմարիտ է . բայց քանի որ Տեառք իմ , հոս տակաւին կասկածողներ կան անոնց վրայ որք վաւերացուցին Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը , ինչպէս կ'ուզէք որ Վեհ . Հայրա-

պետը հետուէն չը կասկածի , անոր համար պէտք է խնդիրն իւր բուն վիճակին մէջ նրկատենք եւ աթոռային յարաբերութիւններն ուղղութեան մէջ դնենք , այն յարաբերութիւններն որ դժբաղդ պատճառներով մինչեւ ցարդ ուղղութեան մէջ չը դրուեցան . ուղղենք զանոնք , այս ալ բնական է որ Նորին Վեհափառութեան գործակցութեամբը միայն կրնայ ըլլալ :

Արդ՝ ենթադրելով որ Վեհ . Հայրապետն ունի այդ գաղափարը եւ անոր համար պատգամաւոր ուղած է , բացարձակապէս կ'ըսեմ թէ Իփեկեան էֆէնտի բարեկամիս զիտողութիւնները կրնային նկատողութեան առնուիլ , եթէ Նախաքննիչ զիւաններն իրենց առաջարկութեան մէջ ըսած ըլլային թէ պատգամաւոր զրկել հարկ է . այն ատեն կարելի էր իմ կողմէս ալ ուրիշ կերպով մեկնուիլ . բայց Նախաքննիչ զիւանները չեն ըսեր չէ՛նէ , այլ պարզապէս կ'ըսեն՝ որ Վեհ . Հայրապետը գոհ պիտի ըլլայ խնդիրը վերջացած համարելով , եւ կամ նորէն պատգամաւոր պիտի ուղէ . եթէ նորէն պատգամաւոր ուղէ , այն ատեն կը խորհինք անոր վրայ . իսկ այժմէն այս մասին վիճաբանութիւն ընելը խնդիրը կնճռոտել եւ երկարաձգել է : Ուստի կ'եզրակացնեմ թէ Նախաքննիչ զիւանաց առաջարկութիւնը շատ օրինաւոր եւ ընդունելի է ըստ իս : Այն կասկածները՝ զոր Իփեկեան էֆ . յարոյց Վեհ . Հայրապետի կոնդակին վրայ եւ որով առիթ տուաւ ուրիշներուն բողոքելու , կը փարատին , Իփեկեան էֆ . որչափ որ զԱզգային ժողովը գատապարտեալ կը կարծէ Նորին Վեհափառութեան կոնդակաւ , կը սխալի . վասն զի եթէ կայ յիրաւի այդ կոնդակին ոգւոյն մէջ գատապարտութեան վճիռ մը , անտարակոյս ինքն իբրեւ երեսփոխան քուէ տըւած ըլլալուն պատճառաւ այն գատապարտութեան ենթակայ կը կարծէ ինքզինքը . յայտնի է թէ ես խնդրոյն լուծմանն աշխատող եւ անոր փութացումն իբրեւ Ազգին օգտակար զերեսփոխանութիւնը համոզողներէն մէկն ըլլալուս պատճառաւ իրմէ շատ աւելի ծանր գատապարտութեան տակ պէտք է գտնուիմ . բայց իմ կարծիքս այն է թէ կոնդակին ոճը՝ որ կրնայ զանազան կերպիւ մեկնուիլ , գուցէ այն կերպիւ ալ մեկնուի , սակայն ոգին գիտ-

ցողներն ըստիս պէտք չէ զայն ուրիշ կերպիւ մեկնեն , այլ ինչպէս որ ես մեկնեցի եւ ինչպէս որ Նախաքննիչ զիւաններն ըմբռնած են : Այսպէս եղած ժամանակ Վեհ . Հայրապետն ալ ինքնին պիտի գիտնայ եւ իմանայ , եւ խնդիրն ալ ազգային իրաւանց համաձայն եղանակաւ պիտի լուծուի . ես Իփեկեան էֆէնտիի հետ համակարծիք եւ իրեն չափ նախանձախնդիր եմ ազգային իրաւանց . այսու հանդերձ այնպէս կ'ըմբռնեմ թէ Մայր Աթոռոյ իրաւունքներն անբաժան են Ազգիս իրաւունքներէն , եւ չեմ տարակուսիր թէ գտնուի Երեսփոխան մը՝ որ ուղէ զանոնք իրարմէ դատել եւ ուղղութեան մէջ մտնելն արգիլել . ով որ այս շահերը դատել կը խորհի ամենէն մեծ սըլալը կը գործէ թէ ի Տաճկաստան թէ ի Ռուսաստան կամ ի Հնդկաստան . ի մի բան՝ ուր որ երթանք Հայաստանեայց Եկեղեցւոյ իրաւունքները կան եւ կը մնան , զանոնք պէտք է յարգենք :

Վերջապէս՝ կը կրկնեմ , որ Նախաքննիչ զիւանաց առաջարկութեան համեմատ պարզապէս գրուի Վեհ . Հայրապետին , եւ երբ նորէն պատգամաւոր ուղելու պնդում ըլլայ , այն ատեն խորհինք այդ կէտը . իսկ այսօրուան համար աւելորդ է այդ մասին մտածել :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ . — Երեսփոխան Տեառք , Ազգային ժողովն ասկէ առաջ Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը վաւերացնելով ազգային հաւանազ սովորութեանց եւ ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւասութեան դէմ գործելու միտում ունեցած չէ երբէք : Այս վաւերացման դէմ Վեհ . Հայրապետին նախ հեռագրով եւ ապա կոնդակաւ բողոքելն ալ իրաւացի է . երկու կողմն ալ ճշմարտութիւններ ըլլալով հանդերձ մէջ տեղ կատարուած իրողութիւն մը կայ , այն է՝ թէ Արարատեան Մայր Աթոռին հաւատարիմ մնալու եւ անկէ չընդվզելու ուխտող եպիսկոպոս մը Սոյ կաթողիկոս ընտրուելու եւ անոր ընտրութիւնը վաւերացնելու առանց ամենայն Հայոց Հայրապետին՝ որ վերին իրաւասութիւն ունի եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսաց վրայ , հաճութիւնն առնուելու :

Պէտք է գիտնալ արդ՝ թէ այս կատարուած իրողութեան մէջ ով պակասաւոր եւ պատասխանատու է : Ազգային ժողովը չէ՛ Տեառք . վասն զի Ազգային ժողովն այս վաւերացման գործ-

ղութեան մէջ Վեհ . Հայրապետին հաճութիւնն առնուելու պէտքը նախատեսելու եւ իւր 1870 հոկտեմբեր 16 ի նիստին մէջ Սոյ կաթողիկոսական ընտրութեան գործողութիւնը կատարել տալը Վարչութեան յանձնած ատեն՝ միանգամայն Սոյ կաթողիկոսին իրաւասութեան սահմանն որոշելու եւ գծելու համար Յարաբերութեանց յանձնաժողով մը գրեւէ՝ ընտրութեան վաւերացումէն առաջ իր ծրագիրը բերելու պայմանաւ :

Ազգային ժողովիդ այս իմաստուն որոշումն եթէ գործադրուէր , ի հարկէ ըստ օրինի Վեհ . Հայրապետին կամքն ու հաճութիւնն առնելէն ետեւ եղած ընտրութիւնը պիտի վաւերացնէր Ազգային ժողովը . բայց դժբաղդաբար Վարչութիւնն ընտրութիւնը փութացուցեր եւ կատարել տուեր է առանց Յարաբերութեանց ծրագրող յանձնաժողովն ի գործ հրաւրելու . եւ այս յարաբերութեանց մասին եղած որոշումը տարի մը՝ այսինքն 1870 հոկտեմբեր 16 էն մինչեւ 1871 նոյեմբեր 8 անգործադրելի թողեր է : Եւ մինչդեռ կատարուած ընտրութիւնը վաւերացնելու համար ստիպողակա՛նութիւնը պատճառաբանող տեղեկագիրն Ազգային ժողովիդ նոյն թուականի նոյեմբեր 12 ին ըրած նիստին ներկայել պատրաստուած է , անկէ չորս օր առաջ՝ նոյեմբեր 8 ին Յարաբերութեանց յանձնաժողովը կը հրաւիրէ իւր ծրագրովը պատրաստելու : Այդ Յանձնաժողովն ի հարկէ չորս օրուան մէջ բան մը չէր կրնար ընել . սակայն միւս կողմանէ ժողովը Վարչութեան մէջ քերած ստիպողակա՛նութեան առջեւ եղած ընտրութիւնը կը վաւերացնէ :

Այս կատարուած իրողութեան դէմ երբ Վեհ . Հայրապետը Վարչութեան հեռագիր մը ուղղելով կը բողոքէ , միանգամայն ընտրեալ եպիսկոպոսին ալ մասնաւոր կոնդակաւ մը կը յիշեցնէ իւր ուխտը՝ զոր ըրած է իւր ձեռնագրութեան ատեն իբրեւ միաբան Ս . Էջմիածնի : Այս կոնդակին պատասխան կուտայ Մկրտիչ սրբազան , եւ գիտէք ինչ կըսէ իւր պատասխանին մէջ . էֆէնտիս ընտրութեան օրէնքն է Ձեր կոնդակին բացարձակա՛նութեան փոխարէն պատգամաւոր ուղելու , որ ըսել է ի՞նչ օրէնքն է Ձեր կոնդակին բացարձակա՛նութեան փոխարէն վաւերացնելու : Այս վաւերացման գործը իբր թէ Վարչութիւնն ուխտած ըլլար :

ԻՓԵԿՃԵԱՆ Հ. ԷՅԹ . — Ո՛ւր է այդ պատասխանն , մեր արձանագրուած է :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — Այգ պատասխանը ժամանակին եւ խորիմեան Սրբազանի գրասեղանին վրայ տեսած եմ : Վարչութիւնը Նորին Ահնարաբարութեան հետագործն պատասխան մը կը դրկէ : Եւ այս ոչ նուազ նկատողութեան արժանի պատասխանին վրայ կուգայ Վեհ. Հայրապետին կոնդակը :

Նկատեցէք : Տեւորք, մէկ կողմանէ Յարարութեանց յանձնաժողովը տարի մը չը բարախրուիր, եւ առանց այս յապագան պատահածները յայտնուելու՝ միւս կողմանէ ընտրութեան վաւերացումն ստիպողական պարագաներու տակ կը բերուի Ազգային ժողովիդ : այնպիսի ստիպողական պարագաներ՝ որք յետոյ չտեսնուեցան, եւ ընտրութիւնը կը վաւերացուի Յարարութեանց որոշման գործադրութիւնն ետքի թողով : որով տեղի կը տրուի Վեհ. Հայրապետին բողոքանաց : Ա՞վ է ասոր պատասխանատուն եւ ո՞վ պակասաւոր : — Նորէն կ'ըսեմ, Ազգային ժողովը չէ, այլ ժամանակին Վարչութիւնը՝ որ չէ գործադրած Ազգային ժողովին Յարարութեանց մասին ըրած այն իմաստուն որոշումը :

Վեհափառ Հայրապետն իւր կոնդակովը կ'ըսէ. այս պարագային մէջ ինձ չը հարցնելով ինքնին գործելիսիդ մեծ թերութիւն է. վասն զի ձեր Սահմանադրութիւնն ասանկ պարագաներու մէջ ամենայն Հայոց Հայրապետին դիմել կ'օրինադրէ, եւ ինչն չը գիտեցիք : Այ՛ տը կը տարակուսի Վեհ. Հայրապետին այս ըսածին իրաւացի եւ ճշմարիտ ըլլալուն վրայ, եւ պէտք է՛ է ալ տարակուսիլ. վասն զի այսօր Վարչութիւնն երբ ազգային պաշտօնի մը համար վանքէ մը վարդապետ մը կ'ուզէ, նախ պէտք է նոյն վանուց վանահօր հաճութիւնն առնու. ինչպէս որ նոյն ժամանակի Վարչութիւնն Նրուսողէմայ միաբան Սիմոն եպիսկոպոսը Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը կատարելու համար միայն՝ երբ որոշեց իրրեւ տեսուչ ՚ի Սիս դրկել, նախ Նրուսողէմի Ս. Պատրիարքին հաճութիւնն առաւ եւ ապա դրկեց : չգիտեմ ինչ կը նշանակէ որ Վարչութիւնն Նրուսողէմի միաբան եպիսկոպոս մը լոկ գործողութիւն մը կատարելու համար՝ առանց նոյն վանուց Պատրիարքին հաճութիւնը կանխաւ առնելու : չկրնար Սիս դրկել զայն : մինչդեռ Ս. Եջմիածնի միաբան եպիսկոպոս մը Սոյ կաթողիկոս ընտրուելուն մէջ Վեհ. Հայրապետին հաճութեանց յանձնաժողովը տարի մը չը բարախրուիր, եւ առանց այս յապագան պատահածները յայտնուելու՝ միւս կողմանէ ընտրութեան վաւերացումն ստիպողական պարագաներու տակ կը բերուի Ազգային ժողովիդ : այնպիսի ստիպողական պարագաներ՝ որք յետոյ չտեսնուեցան, եւ ընտրութիւնը կը վաւերացուի Յարարութեանց որոշման գործադրութիւնն ետքի թողով : որով տեղի կը տրուի Վեհ. Հայրապետին բողոքանաց : Ա՞վ է ասոր պատասխանատուն եւ ո՞վ պակասաւոր : — Նորէն կ'ըսեմ, Ազգային ժողովը չէ, այլ ժամանակին Վարչութիւնը՝ որ չէ գործադրած Ազգային ժողովին Յարարութեանց մասին ըրած այն իմաստուն որոշումը :

տին հաճութեանն առնուելու՝ մասին անտարբեր կը մնայ. եւ այս Յարարութեանց համար կազմուած յանձնաժողովը ժամանակին չը կոչէր ՚ի գործ, որպէս զի իւր ծրարիլը պատրաստելով ներկայացնէ ժողովին : Յաւօք կ'ըսեմ նաեւ որ այն ատեն կրօնական ժողով ալ չը կար, եւ Քաղաքական ժողովն այս ամեն բան ինքնին միայնակ գործեց :

ՆՈՒՍՈՒՑՆԱՆ Տ. ԷՅ. — Խօսք կ'ուզեմ Տ. Մատթէոս վարդապետին պատասխանելու համար :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — Այս պարագաներն են որ հեռո՛ղէն նկատողութեան առնուեցան, եւ նոյն իսկ քուէ տուող երեսփոխանաց շատերը ասչեցան եւ շփոթեցան թէ արդեօք սխալ մը գործեցին. եւ այս պարագաները նոյն ատեն ծածկուած մնացին Քաղաքական ժողովոյ յարուցած ստիպողականութեան առջեւ, եւ Ազգային ժողովը ցուցուած ստիպողականութեան համար իւր նախապէս գործադրելի որոշումն ետքի թողուլը խոհեմութիւնն համարեց : յորմէ ծագեցան այսչափ շփոթութիւնք : որոց պատասխանատուութիւնը ժամանակին գործադիր պաշտօնէութեանն է : եւ ոչ Ազգային ժողովիդ : վասն զի Ազգային ժողովիդ ըրածը վստահութիւն մ'էր Գործադիր պաշտօնէութեան վրայ, մանաւանդ երբ բերուած տեղեկագրէն իմացաւ որ ընտրեալ եպիսկոպոսը խոստմնադիր տուեր է Վարչութեան թէ յարարութեանց մասին ինչ որ անօրինէ իրեն համար Ազգային ժողովը՝ պիտի ընդունի, ըստ այնմ վաւերացուց Սոյ կաթողիկոսական ընտրութիւնը : Սակայն պէտք է զիտնալ թէ ընտրեալ եպիսկոպոսէն ասանկ խոստմնադիր մը արուած ըլլալն այն ատեն Սիմոն եպիսկոպոս հետագրեր էր Առանայէն, որոց վրայ յենելով Վարչութեան Քաղ. ժողովն ալ իւր տեղեկագրովը յայտնած էր թէ այս օրինակ խոստմնադիր մը տուած է Մկրտիչ Սրբազան. բայց երբ խոստմնադրոյն բնագիրը հասաւ ժողովոյս, այն ատեն ալ մարդ չ'մնաց որ չ'ապշի. զի Մկրտիչ Սրբազան իւր խոստմնագրով այն արտօնութիւնները կ'ուզէր, ինչ որ միայն ամենայն Հայոց Հայրապետը կրնայ ունենալ ըստ եկեղեցական օրինի :

Վեհափառ Հայրապետն եթէ օտար ազգացութեանց միջամտութեան խօսք կ'ուզէ իւր կոնդակին մէջ, եւ չեմ հետեւցներ ատկէ թէ երեսփոխանութիւնն օտար ազգացութեան գոր-

ծիք եղած է կամաւ, այլ թէ Նորին Վեհափառութիւնն ըսել կ'ուզէ որ օտարք կ'աշխատին զմեզ խաբելու եւ մեր ձեռքով մեր շահուցնու ազգային իրաւանցը դէմ գործել տալու :

Իսկ Վեհ. Հայրապետը պատգամաւոր ուղեւորն ալ նմանապէս ըսել չուզէր թէ ձեր գրածէն բնաւ բան մը չեմ հասկընար, այլ ըսել կ'ուզէ թէ իրարու միտք ազէկ հասկընանք : եւ թէ շատ բան չը կրնալով գրով հասկընեմք բերնով պիտի խօսիմ : Երաւ է որ պատգամաւորը զրկելու ժամանակն անցած է, ինչպէս կ'ըսեն միացեալ երկու դիւաններն իրենց մատուցած տեղեկագրին մէջ :

ԻՓԷԿՃՆԱՆ Զ. ԷՅ. — Կ'աղաչեմ, կոնդակին այդ մասը թող կարգայ :

Տ. ՄԱՏԹԷՆՈՍ Վ. — Վեհափառ Հայրապետին ուղած պատգամաւորաց նկատմամբ ԻՓԷԿՃՆԱՆ է ֆէնտին կ'ըսէ թէ անքաղաքազիտութիւն է ասկէ հոն պատգամաւոր զրկել, եւ միանգամայն կը յաւելցնէ թէ զրկեմք որ Վեհ. Հայրապետն ինք հոս պատգամաւոր զրկէ : Եթէ այս պարագայիս մէջ անքաղաքազիտութիւն մ'ըլլալ կրնայ մտածուիլ, որ աւելորդ է. ինչպէս որ ասկէ հոն պատգամաւոր զրկուելուն մէջ, նոյնպէս եւ անկէ հոս զրկուելուն մէջ կրնայ մտածուիլ. ըստ իս երկուքն ալ միեւնոյն բանն են : Միացեալ դիւանքս թնչ առաջարկեր ենք. Նորէն էլ պատգամաւորն աւելուցնուցին Վեհ. Հայրապետն եթէ վերջապէս պատգամաւոր զրկուելուն վրայ պնդէ խնդիրն առանց ժողովին զալու գործադրուի. ոչ, այլ յայնժամ նկատողութեան առնելով այդ կէտը Ազգային ժողովը պարագային յարմար ու պէտք եղածը որոշէ : Միացեալ դիւանքս ձեւի տակ այսպիսի բան մ'ընել չենք մտաբերած բնաւ :

Խնդրոյ տակ եղած այս իրաւունքները, տեարք երեսփոխանք, ոչ Վեհ. Գէորդ կաթողիկոսին են եւ ոչ այս կամ այն երեսփոխանին, այլ եկեղեցւոյն եւ Ազգին են : անձի խնդիր չկայ հոս : Ազգային ժողովը պարտաւոր է ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւունքները պաշտպանել, զի մերն են : Վեհափառ Հայրապետին ալ կ'ըսէ թէ Եւրը չեն այն իրաւունքները, այլ եկեղեցւոյն եւ Ազգինն են, եւ պէտք է որ անոնք նուիրական ու պաշտօնի ըլլան մեր առջեւ. նոյնպէս եւ մինք պարտական ենք պաշտպանել Ազգին իրաւունքները :

ըր, զորս պահպանելու համար միայն կոչուած ենք՝ յայս երեսփոխանական պաշտօն :

Եզրակայելով խօսքս կ'ըսեմ, Տեւորք, այս խնդրոյն մէջ պատասխանատուութեան որու վրայ ծանրանալը յայտնուելէն ետեւ պէտք չէ ալ երկարել՝ այլ վերջացնել խնդիրը : Այսոյս եմ որ վստահութիւն ունիք ձեր հախաքննիչ դիւանաց վրայ. անոնք խիստ բանաւոր առաջարկութիւն մը բերած են. ընդունինք զայն, եւ կը յուսամ որ անմիջապէս այսչափ ժամանակէ ի վեր եղած շփոթութիւններն ու աններգաշնակութիւնները վախճան առնուն, եւ հայր եւ որդի գիրկընդխառն միանան, յորում միայն կը կայանայ եկեղեցւոյ եւ Ազգին փոխադարձ շահը :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Երեսփոխանութիւնը, Տեւորք, ազատութեան ասպարէզ մըն է, ուր ամէն երեսփոխան կը վայելէ հաւասարապէս այն իրաւունքը՝ զոր կու տայ իրեն Սահմանադրութիւնը : Երեսփոխանական բեմին վրայէն ողջամիտ կարծիքներ անկեղծ համոզումներ համարձակ կ'արտայայտուին, կարծեաց ընդհարումէն յառաջ կու գայ վիճարանութիւն, եւ օրինաւոր վիճարանութիւնը կ'արտադրէ ըզլոյս : Հոս այս ակոսներուն վրայ ուր կը բազմինք իրրեւ երեսփոխանք Հայոց, պարտաւոր ենք մտիկ ընել իւրաքանչիւր պաշտօնակցի խօսքն իրրեւ արտայայտութիւնն նորա ազատ կարծեաց, որչափ եւ այն կարծիքներն հակառակ ըլլան մեր կարծիքներուն : Մեր իրաւունքն է լռեցնել մեր ընկերակից երեսփոխանը չէ թէ բռնութեամբ, այլ փաստերով եւ օրէնք ի ձեռին : Այս է իմ համոզումս. եւ կը կարծեմ որ ձեր ամենուն ալ համոզումն է Տեւորք : Սակայն ինչպէս որ ամէն երեսփոխան ազատութիւն ունի իւր համոզումը պաշտպանելու, նոյնպէս պարտականութիւն ունի ուրիշի համոզումն ալ յարգելու, եւս առաւել այն համոզումներն որ խրդճի հետ կամ հասարակաց պաշտօնական համոզման մը հետ կապուած են, եւ որոց դէմ յարձակիլը բնաւ երբէք ներքի չէ :

Եթէ պահ մ'առաջ բողոք բարձի երեսփոխանի մը դէմ, մի կարծէք, Տեւորք, թէ իւր անձին դէմ էր այն կամ բռնանալ մըն էր իւր համոզմանը դէմ. այլ բողոք մըն էր իրականութեան մը դէմ արուած այլընդայլոյ եւ խեղաթիւր մեկնաբանութեանց : Եւ անս դայն կ'ուզեմ բացատրել, Տեւորք, որպէս զի ակն

յայտնի տեսնուի թէ՛ արչափ հեռի եմ ես անձնական եպերելի խնդիրներէ :

Գիտէք ապաքէն թէ Եկեղեցին եւ Սահմանադրութիւնն ինչ պատկառելի զիրք մը ընծայած են Հայաստանեայց Մայր Աթոռին , հետեւապէս եւ նորա ազգայնութիւնը ընտրութեամբ օժեալ դահակալ Հայրապետին : Այս Ազգային ժողովին մէջ կարելի չէ ներել ո՛ր եւիցէ յարձակումն այս ազգային ակնածելի համադրանք դէմ : Կրնայ ըլլալ որ երեսփոխանին մէկը Ս . Էջմիածնայ վրայ այնպիսի կարծիք մ'ունենայ զոր ես չունիմ . ես չեմ անարգեր զայն , թէ եւ կը փափաքիմ որ նա մասնակից ըլլայ իմ համոզմանս եւ փորձառութեանս : Բայց երբ երեսփոխան մը սոյն իսկ այս պատկառելի ժողովիս մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանրական Հայրապետին նուիրական մէկ Կոնգակին այն ծուռ մեկնութիւնները կը համարձակի տալ զոր ոչ Կոնգակը կը պարունակէ եւ ոչ Աեհաշնորհ Կոնգակաղբին գաղափարներուն մէջ մուտ գտած են երբէք . չեմ կրնար ստուծութիւնն ընդունիլ եւ չը բողոքել անոր դէմ . . .

(Եփէկճեան էֆէնտին բողոքեց « Գրեթէ քառին դէմ , հատուցում պահանջելով . բայց Ատենապետ էֆէնտին լուծեան ազգարարութիւն ընդունեց) :

Տ . ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ . — Իմ պարտաւորութիւնս էր բողոքել , եւ այս պարտաւորութիւնը խղճի մտօք կատարեցի . նոյնն ըրին նաեւ բազումք եկեղեցական հարց եւ աշխարհական երեսփոխանաց . եւ այս իսկ բաւական սպացոյց մըն էր թէ հասարակաց համոզման դէմ էր նոյն երեսփոխանին յարձակումը : Եւ ինչ ըրինք մեք : Երբ տեսնեք որ կը շարունակուի վիրաւորել մեր համոզումը , պահեցինք մեր ազատութիւնը այլ եւս լսել չուզելու այն խեղաթիւր մեկնաբանութիւնքը , ուստի եւ դուրս ելանք ժողովիս սրահէն : Ըսի թէ անձնականութեան դէմ չէր իմ բողոքս . այո՛ , Տեսնաք , այնչափ հեռի եմ անձնականութեան մասնաւորութիւններէ , որ եթէ իմ իսկ անձին դէմ յարձակում մը տեսնէի՝ զիտէի լուծեամբ պատասխանել , Կարծեմ թէ ըսածիս ապացոյցները տուած եմ երբէք երբէք նոյն իսկ այս ժողովիս մէջ , Ի՞նչ էր ուրեմն այն կէտն որոյ դէմ բողոքեցի ընկերակցացս հետ . ներեցէք , Տեսնաք ,

որ բացատրեմ յառաւելագոյն լուսաբանութիւններկայ խնդրոյն :

Վեհափառ Տէրը Կոնգակ մը խրկած էր , որոյ մէջ ժողովիս մասնակցութեամբը կատարուած գործողութիւն մը , կ'ուզեմ ըսել Էջմիածնայ ուխտեալ եպիսկոպոսի մը յաթուռն Սոյ բարձրանալուն ժողովիս ձեռօք եղած վաւեւացումն անընդունելի դատած էր իբրեւ ընդդէմ հնաւանդ սովորութեանց մեր Եկեղեցւոյ ուստի եւ յուզողութիւն հրաւիրած էր զժողովիս Գիտէք արդէն թէ այս իրողութիւնն ինչպէս եւ Կոնգակը նոր չ'են . արդէն այս ժողովին մէջ վիճաբանութիւնք տեղի ունեցած են այս մասին , եւ այն ատեն եղած կծու ակնարկութեանց առջեւ եւս տեղի ունեցած են այսօրուան բողոքներն ու յուզումները . վասն զի քննադատութիւն եւ վիճաբանութիւն սահման մը ունին , եւ ոչ ոք երեսփոխանաց իրաւունք ունի այդ սահմանէն շեղելու . գրութեան մը վրայ քմահաճոյ յաւելուածներ ընել , հակիմաստ մեկնութիւններ տալ՝ քննադատութեան եւ տրամաբանութեան դէմ մեղանշել ըսել է : Կը հարցնեմ . արդեօք նոյն Կոնգակին որ կէտին մէջ կայ այն իմաստը՝ զոր ատենաբան էֆէնտին պահ մ'առաջ համարձակեցաւ յայտնել , իբր թէ Վեհ . Կաթողիկոսն ինքնիշխանաբար պիտի դատապարտէ զայս ժողովը

ԻՓԷԿՃԵԱՆ ԷՖԷՆՏԻՆ . — Կոնգակն ի ձեռին պիտի հաստատեմ զայդ :

Տ . ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ . — Բարեբաղդաբար հրատարակուած է արդէն այդ Հայրապետական Կոնգակը , ուստի եւ փաստերու հարկ չըկայ ամբաստանութիւնը ցրելու . բաւական է զայն վերձանել եւ բաղդատել ատենաբան էֆէնտին բացատրութեանցը հետ . ճշմարտութիւնն իսկոյն կը հասկըցուի : Նմանապէս կը հասկըցուի թէ կարելի էր արդեօք որ երեսփոխան եպիսկոպոս մը իւր լուծեամբն ընդունի Վեհ . Հայրապետին պատկառելի մէկ Կոնգակին այդ աստիճան խեղաթիւրումը յատենի այս Ազգային վեհադոյն ժողովոյս :

Այս հակիրճ բացատրութիւնս իմ բողոքիս նկատմամբ տալէս ետքը , հարկ կը համարիմ այժմ մեզ զբաղեցնող կէտին վրայ ալ քանի մը խօսք ընել եւ մեկնաբանել այն կարծիքը , զոր ասկէ առաջ յայտնած եմ այն հանդիսաւոր օրը յորում Սոյ Կաթողիկոսին ընտրութիւնը վաւերացաւ ժողովիս մէջ . — Կը յիշէք անշուշտ , Երեսփոխան անարք , այն յուզումն այն

եռանդն այն սրտագրաւ ցնծութիւնն որ պատճառեցաւ մեզի երբ իմացանք պաշտօնական յայտարարութեանէ ժամանակին Վարչութեան թէ ընտրեալն ի Կաթողիկոսութիւն Սոյ խոստացած է ուխտիւ ընդունիլ եւ գործադրել ինչ որ Երեսփոխանական ժողովը պիտի անօրինէ եւ պիտի պահանջէ իրմէ , ենթարկելով զինքն Ազգային մայր Աթոռոյն : Ես այն օրն եզրակացուցի ուրախութեամբ թէ միութիւն էր այս խոստումն այս ուխտն ընդ Արարատեան մայր Աթոռոյ Ս . Էջմիածնի : Զեմ զարմանար թէ ինչո՞ւ այսպիսի ցանկալի լուր մը հրատարեց եւ հիացուց զմեզ . վասն զի գիտեմ որ ինչպէս իմ , նոյնպէս ամենուր փափաքն է այն ազգաշահ միութիւնը , Տխւր են այն ժամանակներն որոց տակ հեծեց Հայաստանեայց Եկեղեցին աթոռային անմիութեան երեսէն : Ինչ որ զրթխեմ ժամանակներ մեզ աւանդած են , զայն է որ մենք կը պահենք այսօր գուցէ ոչ սիրով , եւ պահպանած ժամանակնիս երբ ներդաշնակութեան յոյս մը կը տեսնենք , սրտերնիս չը կրնար չ'զղալ ոգեբորբօք ուրախութիւն մը : Անոր համար այն օրն ըսի եւ գոչեցի . Օրհնեալ է այ՛ օրն . եւ յիրաւի օրհնեալ պիտի ըլլար՝ եթէ պահուէր այն ուխտը հաստատութեամբ եւ անկեղծութեամբ : Բայց դժբաղդաբար այնպէս չ'եղաւ , եւ այն անձն՝ որու վրայ այնքան յոյսեր կը թեւածէին , այն անձը՝ կ'ըսեմ , չ'ըմբռնեց եւ չը հասկըցաւ թէ ինչ բարձր էր իւր կոչումը , դարաւոր փափաքուած միութեան մը զօրոզ հանդիսանալու : Ասոր համար ուրիշ բան պէտք չ'էր բայց եթէ ուղիղ միտք , հաստատուն երդում եւ արժանավայել հլութիւն՝ Հայաստանեայց մայր Աթոռոյն գերագահութիւնը ճանաչելով բանիւք եւ արդեամբք . այն ատեն ամեն գծուարութիւնք կը դիւրանային , ժողովոյս ուղղամտութիւնը կ'ապացուցուէր , եւ արտակեղծոն շառաւիղք կուգային կը միանային ի կեղծոն միութեան իւրեանց , որ է Առաքելական Աթոռն Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ :

Արդ քանի որ այս յուսացուած եւ բաղձացուած միութիւնը չը յաջողեցաւ , պէտք է խոստովանիլ որ անշուշտ մեր հեռատեսութեան մէջ վրիպած էինք , եւ մեր ըրած վաւերացման մէջ սխալ մը գործած : Զայդ մենէ լսու եւս հեռատեսելով Վեհափառ Տէրը հասկըցաւ թէ թիւր քայլ առած ենք , մանաւանդ երբ այս .

պիտի ծանրակշիռ խնդրոյ մը մէջ իւր նախընթաց հաւանութեանը չը գիմելով՝ հակառակութեան գիրքի մէջ փոխուեցաւ խնդիրը : Անշուշտ , Տեսնաք , ներդաշնակութիւնն այն ժամանակ կը յաջողի՝ երբ ամենուր սիրտը մէկ ըլլայ , ամենուր խորհրդածութիւնն ի միամտփոփուի . իսկ ուր սիրտերն ու խորհուրդները մէկ չ'են , հարկաւ ներդաշնակութիւն չը գոյանար : Այսպէս եղաւ այս պարագային մէջ ալ : Բայց միթէ պէտք է որ յուսահատինք . ես յուսահատող չեմ ապագային վրայ , եւ գիտեմ որ դուք ալ նոյնպէս կը մտածէք : Վեհափառ մենէ ալ աւելի յուսալից կը նկատէ զապագայն , իբրեւ գահակալ այն աթոռոյն որ է եւ պիտի ըլլայ միշտ կեղծոն միութեան Եկեղեցւոյ մերոյ . բայց իբրեւ աւանդապահ օրինաւորութեան՝ բնական էր որ պահանջէր որ օրինաւորապէս քայլեր առնուին նոյն իսկ դէպ ի միութիւն զիմուած ժամանակը : Ժողովոյս ատենաը խնդիր մը կար յորհեալէն անուսնով որ ապարդիւն մնաց , վասն զի անտեղի էր . Վեհափառն ուղեց հասկնալ թէ ինչ էր Ազգին միտքն ու փափաքն այս խնդրոյս մէջ . անոր համար պաշտօնական պատգամաւորներ ուղեց մենէ , որոնցմէ լսէ եւ որոնց հաղորդէ եւս իւր ակնածելի գաղափարները : Յարաբարութեան խնդիրն անտեղի էր ըսի . վասն զի այն Եկեղեցւոյն մէջ՝ ուր ԱՅՅԱ թվէն ի վեր աթոռական բաժանումը կայ , կամ աւելի ճիշդըն ըսեմ՝ Սիս հերձեալ կը տեսնուի մայր Աթոռէն Ս . Էջմիածնի , այն ցաւալի թվականէն ի վեր Հայոց Առաքելական Աթոռն Աստուածային օժանդակութեամբ կրցեր է իւր վեհութիւնը պահպանել եւ իւր հայրական խնամքները տարածել ընդ բոլոր աշխարհ ցրուեալ ազգի մը վրայ , ո՛չ այլ իւրիք՝ բայց եթէ իւր օրինաւորութեան բարոյական ազդեցութեամբ ընդ իշխելով բոլոր Հայոց սրտերուն եւ խղճերն իշխելով բոլոր Հայոց սրտերուն եւ խղճերն իշխելով ըսել յԱթոռն առաքելական Եկեղեցւոյս մերոյ : Ո՛չ ապաքէն զսոյն պիտի հաստատէ այն ազգային Եկեղեցական ժողովը՝ զոր Վեհ . Հայրապետն իւր Կոնգակին մէջ կ'ակհարկէ , եւ որ կարող է օր մը վերջ տալ ամեն

(Ե. Վիճակ)

Մամսթիս

| | | | |
|-----|---------|----------|----|
| 85. | Աւետիս | Քօլօլեան | |
| 86. | Նազարէթ | Շահպազ | Բ. |
| 87. | Նշան | Օտեան | |
| 88. | Յակոբ | Քաղաղեան | |
| 89. | Եղիազար | Մելիքեան | |
| 90. | | | |
| 91. | | | |
| 92. | | | |
| 95. | | | |
| 94. | | | |

Խասգիտոյ

| | | | |
|------|----------|---------------|------|
| 95. | Ա.աքել | Ալթուն Տիւրքի | Բ. |
| 96. | Խաչատուր | Պ. Միսաքեան | |
| 97. | Սարգիս | Արապեան | |
| 98. | Սիմոն | Միքայէլեան | |
| 99. | Ռէթէոս | Պէլիկեան | Բ. 2 |
| 100. | | | |

ԳԱԻԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

Կարին

| | | | |
|------|--------|------------------|------|
| 101. | | Քիօթահենա | |
| 102. | Մեարոյ | Յ. Այվատեան | Բ. Պ |
| | | Աղբիւրնոսոյոյիս | |
| 105. | Ռուբէն | Կիւմիւշկերտանեան | Բ. |
| | | Նիկոմիդիս | |
| 104. | Տիգրան | Կիւմիւշկերտանեան | Բ. |
| | | Այն | |
| 105. | Պեարոս | Միսաքեան | |
| | | Ղարաճիսար | |
| 106. | | | |

Արարիկեր

| | | | |
|------|-------------|------------|----|
| 107. | Կարապետ | Խաչիկեան | Բ. |
| | | Բաղիշ | |
| 108. | | | |
| | | Պրոնաս | |
| 109. | Քրիստոստուր | Ղազարոսեան | |
| | | Երոյկիս | |
| 110. | | | |

Ամսիս

| | | | |
|------|------------|-------------|----|
| 111. | Համբարձում | Ալաճաճեան | |
| | | Բաշոռ | |
| 112. | Յովհաննէս | Ազնաւուրեան | Բ. |
| | | Եղնիս | |
| 115. | | | |

Մաննըլլիս

| | | | |
|------|--|-------|--|
| 114. | | Հանըն | |
| 115. | | | |

Երզնկա եւ Բարերդ

| | | | |
|------|--|----------|--|
| 116. | | | |
| | | Թերիքտաղ | |


| | | | |
|------|--------|-------------|----|
| 117. | Տիգրան | Գ. Սինանեան | Բ. |
|------|--------|-------------|----|

Կեսարիս

| | | | |
|------|------------|------------------|------|
| 118. | | Խարրերդ | |
| 119. | Յովհան | Եաղճեան | |
| | | Պալըքիւքր | |
| 120. | Յովհաննէս | Յովակիմեան | |
| | | Մոռչ | |
| 121. | Ստեփան | Պ. Պ. Փափաղեանց | |
| | | Չէյթուն եւ Մարաշ | |
| 122. | | | |
| | | Տիվրիկ | |
| 125. | Պօղոս | Մովիկեան | |
| | | Տրասիղոն | |
| 124. | Մկրտիչ | Կիւմիւշկեան | |
| | | Պաղտատ | |
| 125. | | | |
| | | Տիգրանակերտ | |
| 126. | Թադէոս | Թէրեան | Բ. |
| | | Վան | |
| 127. | Սիմոն | Մարտուտեան | Բ. 2 |
| | | Աղթամար | |
| 128. | | | |
| | | Հաղկոյ եւ Այնթապ | |
| 129. | | | |
| | | Մերաստիս | |
| 150. | | | |
| | | Ռոստոմիս | |
| 151. | | Կարս | |
| 152. | Աբրահամ | Յ. Այվաղեան | Բ. Պ |
| | | Չեջկամազ | |
| 155. | Համբարձում | Սարգեղեան | |
| | | Գաղատիս | |
| 154. | | | |
| | | Ատանա | |
| 155. | Սիմոն | Պ. Նորատուռեան | Բ. 2 |
| | | Մըղերդ | |
| 156. | Մատթէոս | Ալեքսանեան | |

(Կ. Վիճակ ք տակաւին չեն ընտրած)





ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵՒՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ՅԱՏԿԱՑԵԱԼ

**Կը ճախոջի ի Դիշանստանս Պատրիարքարանսի , և կը գտնոջի
Եկեղեցեսց թանկաշները :**